


Գ Ր Ա Ն Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՎՆԵՆԵՆԻ, ՎՇՐՈՒԹՆԵՆ, ԲՆԱՍՏԵԿԱԿԱՆ ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկոմեքատ, Եփեսոս, 1955 թ., 447 էջ:



Սովետական Հայաստանի Պետական Հրատարակչությունը Ստոկոլմի Տարածչու խմբագրությունը 1955 թվի վերջերս լույս բնծայեց արևմտահայ մեծ բանաստեղծ Գանիկի Վարուժանի բանաստեղծությունների ամբողջական ժողովածուն մի հատորի մեջ ամփոփված:

Գանիկի Վարուժանը արևմտահայ պոեզիայի խոշորագույն վարպետներից մեկն է, որը գրական ասպարեզ իշավ իր հեռ ընթացիկ նոր ըմբռումները, գրելու ինքնուրույն կերպը և ջանքը, զեղարվեստական ձևի նվաճումները, և իր մեծ տաղանդի ուժով բերթողական արվեստը բարձրացրեց, Երան հաղորդելով նոր շունչ և ոգին նա ապրեց ընդամենը երեսուն և մեկ տարի: Եւր կարճատև բայց բեղմնավոր կյանքի ընթացքում նա ստեղծագործեց մեայուն արժեք ներկայացնող զեղարվեստական գործեր, որոնք պատվավոր տեղ են զբաղում մեր գրականության ընդհանուր գանձարանի մեջ:

Գրքում զեանգված են շոքս հատորներ, որոնցից կրկնքը՝ «Սարսուռներ», «Յեղին սիրտը» և «Հերանոս Երզն» լույս են տեսել հեղինակի կենդանության օրով, իսկ վերջինը՝ «Հացին երգը» հրատարակվել է նրա մահվանից հետո, 1921 թվին:

Վարուժանի պոեզիան թե՛ թեմատիկայի, թե՛ ժանրերի, թե՛ պոետիկական պատկերների և ձևերի տեսակետից բազմազան է և բազմերանգ: Նա երգեց հայի տառապանքը և նրա սիրտը դուրս բաշեց դարավոր թե՛րթիթի՝ ազատարարչ ռոզրումների ի խնդիր: Աշխատալորի ցավը երգեց նա, զրկվածի հուսահատությունը և միսմամանակ փառարանեց զեղեցկության և ուժի վեհությունը: Իր հզոր երևակայությամբ, լեզվի նոխությունը, հորը ու զեղեցիկ պատկերներով նա ստեղծեց շրեղ ու անկորնչելի զեղեցկություններ՝ արժանի սերունդների անկաշառ հիացմունքի:

Վարուժանի բանաստեղծությունների առաջին հատորը՝ «Սարսուռներ»-ը ամփոփում է նրա ստեղծագործության առաջին տարիների վաստակը և որի մեջ արդեն իսկ երևան է գալիս ապագա մեծ բանաստեղծը:

Գրական հասարակացնությունը շերտերն ողջունեց նրա մեջ բարբառող ազգային շունչը, ազգային ոգին:

1905 թվականին Վարուժանը հրատարակ հանեց «Յեղին սիրտը»: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ընդդեմ թուրքական բռնակալության, ահա գրքի գաղափարական բովանդակությունը: Նա բարձր և կորովի հայրենասիրական շնչով վերջ տվեց հին, ժաղգային» լալկան կրթիթին, որոնք, Վարուժանից բառորդ դար առաջ, լցրել էին արևմտահայ գրական հրատարակչու Այս գրքի էջերում պայքարի և ազատասիրության գաղափարն է թեանծում:

Բանաստեղծը պայքարի հրավեր է կարգում իր բազմաշարշար ժողովրդին: Մի ցանկ բանաստեղծությունների մեջ սրտամոխիկ և մռայլ դուշներով նկարագրում է թուրքական կոտորածները («Ջարգը», «Կիլիկյան մոխիրներում»), մահվան տխուր տեսարանները, որոնք նրա գրչի տակ երբեմն հանդես են գալիս նատուրալիստական դոմավորմամբ և բանաստեղծը պայքարի գրոշն է բարձրացնում: Անցյալի հայրենասեր հերոսների անձնուրաց պայքարի օրինակով, նա կոչ է անում նոր սերնդին՝ պայքարի հանուն ժողովրդի ազատության և ժողովրդի համար նվաճել հաց, ազատություն, արդարություն, շխտի երթը»:

«Պայքար», «Դուրացանի մը սուրին», «Հաղթողը», «Հովիվը» առգորված են ազատագրական պայքարի հզոր շնչով:

Արդարության և ազատության գաղափարները դուրացանք են ծնում: Դուրացանք են Վարուժանի հերոսները այր թե կին, հովիվ թե զինվոր, ծեր թե երիտասարդ: Երանը ազատության, արդար վաստակի անձնուրաց պաշտպաններ են:

Ազատությունն արգասաբեր է, և նրա շերտիվ է, որ ժողովուրդը «Դուրին մեջ ա՛լ կաթ ունի, տաշտին մեջ ա՛լ հաց ունի»:

Վարուժանը պայքարի երգիչ է, նա կոչ է անում պայքարի դուրս գալ սուլթանական բռնակալության դեմ: Այդ տեսակետից բնորոշ է «Հովիվը» բանաստեղծությունը, որի առաջին մասում Վարուժանը մեջ

նրա մեջ սրտամոխիկ և մռայլ դուշներով նկարագրում է թուրքական կոտորածները («Ջարգը», «Կիլիկյան մոխիրներում»), մահվան տխուր տեսարանները, որոնք նրա գրչի տակ երբեմն հանդես են գալիս նատուրալիստական դոմավորմամբ և բանաստեղծը պայքարի գրոշն է բարձրացնում: Անցյալի հայրենասեր հերոսների անձնուրաց պայքարի օրինակով, նա կոչ է անում նոր սերնդին՝ պայքարի հանուն ժողովրդի ազատության և ժողովրդի համար նվաճել հաց, ազատություն, արդարություն, շխտի երթը»:

նկարագրում է Հովիթի՝ իր հոտի հետ միասին գյուղ մտնելու տեսարանը Պաշր իրիկնամուտ է, և ոչխարներն իրենց «կաթնեղ ծիծերը» ազդերբի մեջ սեղմելով գյուղ են մտնում, մինչ

«Ինչ մտածակա գետակնն շանցած՝ արդեն կը լնցվեր Գյուղը ամբողջ մայրնով և բույրերով լեռնաբերկեր և սրբ առջևն կհաշկին զոռ գամիրուները հոտին՝ Գեղջուկ արդար սրբաաթնունդ տունն իրենց խոյա կու տային»:

«Հովիթը» բանաստեղծության կենտրոնական դեմքը ինքը գյուղի Հովիթն է, խոսուս կանգնած՝ հոտին վերև, Հովիթի իր հրապուրիչ ու մարդկային պատկերի մեջ:

Այնուհետև ձևավորվում է, զոմի և թոնրատան ձմեռային կյանքը: Զմայլելի բանաստեղծությամբ և անգերազանցելի արվեստով մեզ արվում է գեղջիկական կյանքը իր էության մեջ պարզ ու հասարակ, իր հատկանշական կողմերի մեջ թովել ու բաղցր, երբ գիշերները դուրսը ուռնում է քամին և խորհրդավոր սուլումով խրճիթի դռնակն է ծնծում, մինչ շինականները, այդ պարզ ու սրտատուշ մարդիկ, հավաքված թոնրների շուրջ, հերիաթների թևերի վրա գիշերներ են լուսացնում:

«Այն ատեն ես կրակի դրվարածին ալևոր»

— «Պատր, պատմե՛. լուներու կուզեմ հերիաթ մը ազվոր»:

Նվ հերիաթ ու իրականություն միախառնվում են երանց երևակայության մեջ, կյանքի տխուր իրականության շափ, հեքիաթը իրական հետ շփոթելու շափ: Այս անձնական կյանքի հիշատակներ, սպրված կյանքի բաղցրահոտ լից արամագին վերապրումներ գալիս են ձմեռվա երկար և անհուն գիշերների ձանձուրված մեղմելու Օրերն այսպես անզգաս ու թավազվոր սահում են:

Գարուն է նորից: Կյանքը վերսկսում է գյուղում, գեղջուկն ապրում է իր առօրյա աշխատանքով և վառ, պայծառ հավատով է դիմավորում ավետարեն գարունը այն բաղցր ակնկալությամբ, որ նոր գարունը նոր երջանկություն կբերի:

Բայց ահա աշնան մի տխուր օր Հովիթը գյուղ վերագառնալիս տեսնում է, որ մեռելական մի լուսություն է տիրում գյուղում: Մի ահավոր սարսուռ է զգում նա:

«Կարծես քալեր ամաչի դամբարանի մը մեջ խոր»:
Հովիթն իմանում է, որ «զգլրաշները» մտել են գյուղ, կործանել ու թալանել են ամեն բան, համատարած սգի մատնելով գյուղը: Մեր Հովիթը այլևս չի համբերում, վեր է կանգնում որպես ժողովրդական վրեժի մարմնացում, զենքի դեմ զենքով պայքարելու վճռով՝ «ահն բնդ ական և առամն ընդ առաման», և, Հովվական ցուպի փոխարեն, այս անգամ վերցնում է իր հրացանը և բարձրանում լեռ, որպեսզի

«Ժանիթի դեմ ես ժանիթ, Թաթի դեմ Թաթ վրիժառու. Թող ոսրինները գիտնան՝ որ խաշնարածն այս երկրին Պիա՝ շիղու որ հանգիստ ուտեն խըլած ոսկորնին»:

«Ցեղին սիրտը» հատորի հիմնական իդեան, գաղափարական բովանդակությունը՝ ազատագրական պայքարն է և հայրենասիրությունը: Վարուժանը երգել է նաև հայ պանդուխտի վշտը, հայրենի հողի և օջախի

սերը, «ավերակ տան մեջ անտերունը թողված» վշտահար մորը («Կարոտի նամակ», «Պատվեր»):

Երիտասարդներ հայրենի տունը լքած դիմում են օտարություն: Տներ դատարկվում են: Պանդուխտության մեջ մարդիկ հյուծվում են կարոտից, քայքայվում են ֆիզիկական և հոգեպես: Այդ այլասերող նահանջի դեմ հարկավոր է թուժը կանգնեցնել: Այս է վարուժանի առաջադրած հայրենասիրության գլխավոր խնդիրը: Նվ վարուժանը երգում է Հայրենի հողի և օջախի սերը՝ սեփական տան սերը՝ հանգիստ ու երջանիկ կյանքի հեռանկարներով քաղցրացած, «Կարոտի նամակ», «Պատվեր» բանաստեղծությունների հիմնական տրամագրությունը այդ հարցերից է թելազրված: Այս անգամ հանդես են գալիս մայրերը, որպես սիրագործ ու զգայուն կանգնող տան շեմքից ներս: Նրանք են պահում, պահպանում հայրենի տունը՝ աչքները օրհորում սեևած իրենց պանդուխտ սրդիների ճանապարհին:

«Կարոտի նամակ» բանաստեղծության մեջ «հայրենի տունը շենցնելու» հողբանությունն է խոսում: Բանաստեղծության առաջին հինգ տների մեջ վարուժանը ներկայացնում է «ավերակ տան մեջ անտերունը թողված» մոր վշտահար պատկերը, որի սիրտը ծվատվել է կարոտից և սպասումից: Գերբզմանի եզրին հասած կնոջ միակ փափազն է տեսնել իր որդուն ու նոր մեռնել:

«Ա՛խ, քեզ տեսնեն անգամ մ'աչքերս ու փակեն Քող հողիս ալ իրենց տակ»:

Նվ կարոտից փեռնկալված սրտով ծայն է տայիս նա. «Նկո՛ւր, որդյա՛կ, հայրենի տունըդ շենցուր.— Դուռն են կտրեր, մառաններն ո՛ղջ դատարկեր. կը մրտնեն ներս լուսամուտեն ջարդուփոշր

Գարնան ամբողջ ծիծառներ»:

«Պատվեր» բանաստեղծության մեջ պանդուխտ ընկերը Հայրենիք մեկնող իր ընկերոջ պատվեր է տալիս իրենց գյուղն ու տունը այցելելու:

«Ընկե՛ր, պատվեր մը ունիմ բու հողիդ հանձնելու. Հայրենակիս օտերուդ կպակելու սիրտ մը ունիմ.— Ծամբուդ վըրա, Ալխի ջուրերուն մոտ այցելու, Ուրիսագարդ գյուղ մը կա. նե՛րս մրտիր. ան գյուղն է իմ»:

Մոր ու հայրենական տան կարոտից մղկատում է հեզ պանդուխտի սիրտը: Գեպքերի դաժան ճնշմամբ հայրենի տնից արտահալած առտապում է նա արագություն մեջ: Նվ մայրը, «զողզող» ու «մոխրագետ» գարածած արգեն, սպասում է իր որդուն, նրա պանդուխտ օրերն իր արտասուրի շիթերով համբերով: Սակայն այդ շարքերը համբ կրավորականության մոտանողներից չէ այդ տղան: Նրա անհկուն և անկապտելի հողու մեջ վրեժի կրակն է բոցավառված:

«Հանձնե մորս իմ և բն՝ որ օրհնե զայն իր ձեռքով. Զայն թող օժն իր աչքին արտոսրներովն ազոթիկեր.

Նվ զբլխուն սե բող առեն, բայց սիրուն ատեն թող կորով.

Զի, ընկե՛ր, այդ նամակին մեջ կարծիր Ուխտս եմ գրեր»:

Նա զինվորագրված է ազատագրական պայքարի, արյուն մինչև վերջին կաթիլը պայքարելու սրբազան ուխտ է արած: Նրա մեջ հառնել է նախնիների ազա-

տասիրության ոգին Վարուժանը նորից գտնում է կովի անհրաժեշտության «Հայրենի լեռներ» բանաստեղծության մեջ Հարցը շեշտակի բացահայտությամբ է լուծում: Հայրենի լեռներում մեր նախահայրերը առաջին մեկ օրից պայքարել են բանակարների դեմ: Այդ լեռները ոչ միայն մեր Հարստության գանձարաններն են ու հանքերը, սրունցից կառուցվեցին մեր պալատներն ու հայաշեն բազարները, այլև նրանք կրեմենի պայքարների ընթացքում ընկածու գեմ անասկի բերդի գեր են խաղացել՝ իրենց փառքների մեջ թաքցնելով փրկությունը: Սակայն զրամբ թափուր են այսօր, զրբիված իրենց «չողագոսակ փառերեն» և «Շեքոյա հերոսներեն»: Բանաստեղծի ամբողջ ցանկությունն է, որ նոր սերունդը գտնան նրանց, որպես զրացի արևուն», գինձի շանթերով, «բլուս առաջահամար զարբ»՝ արժանանալու նամար հերոսական հաղթանակին:

Վարուժանի կերպարը հատուր վերնագրված է «Հերանու կեղև»: Այս հատուր մի գեղեցիկ համարություն է, անցյալի հերոսական օրերի և ներկայի պայքարի ոգով բարախուն: Վարուժանի բերթողական արվեստը այստեղ հասն է նոր նվաճումների: Բանաստեղծը կյանքի, աշխարհի և կրեյտիվների վրա նայում է հասուն արվեստագետի աչքերով: Կրիկական շերտությունը, անկեղծ հուզականությունը, սրանկի բանաստեղծական պատկերներն ու համեմատությունները, սրտահայտական ձևերի բազմազանությունը, ձևի և բովանդակության ներդաշնակությունը, նախ, զուսնազեղ լեզուն առանձին գեղեցիկություն և հրապույր են առաջն Վարուժանի բանաստեղծական արվեստին:

Վարուժանի նպատակն է եղել անցյալի հերոսական օրերի ոգեկոչումը, հերոսների հայրենասիրությունը, ազատասիրությունը, բմբոսությունը, սիրո և գեղեցկության պաշտամունքը ներարկել նոր սերնդին:

«Հերանու կեղև» գրքի կրկնորդ բաժինը «Գողգոթայի ծագիկներ» խորագրեր ունի: Բանաստեղծական այս շարքի մեջ հումանիտա և գեմեոկրատ բանաստեղծը իր մարդկային վերաբերմունքն է դրսևորել կյանքի ցավերի նկատմամբ («Բանվորուհին», «Ընկեցիկը», «Մեռնող բանվորին», «Խարված կույսեր», «Մերենաները», «Մայիս մեկ»): Փողը ոչ միայն ավեր է սփռել բնկերային հարաբերությունների վրա, այլև իր կործանարար ազդեցությունն է թողել բնասանկան և անհատական հարաբերությունների մեջ: Մի տեղ ծանր աշխատանքի տակ բանվորը բթացել, խեղանցամվել և պատուհաս է դարձել իր կնոջը և գովակներին («Սպասում»), մի ուրիշ տեղ երգում է խարված կույսերի մորմորը («Ընկեցիկը»), մի կրքորդ տեղ շունձի հանգույն» կրիտասարդը մի պատուս հացի գուն է, գործատան մերենաները նրա կրճի տակ թորախտի բույն են գրել: Այուր նկարագրվում են գործատան մերենաները, որոնք «գահձի պես կարմիր են» և իրենց զրաններին տակ ձգում են բանվորների կյանքը: Կյանքը

զառել է վերա և պատիժ: Բանաստեղծի համակրանքը այդ զրկվածների, խարվածների, անմասնակների կողմն է, և նա գալուցիվով է լցվում այդ անիրավ աշխարհի դեմ: Նա սիրում է ստատույաններին և նրանց գտան է պաշտպանում:

Վարուժանը վերջապես մարդկության սոցալայի նկատմամբ լավատես է, նա զգում է, որ ժամանակաշրջանը հզի է մեծ պայքարների կրկնորդ: Ժողովուրդները ծառանում են իրենց տերերի դեմ: Ամենուրեք սրտում են «հրավերները, կովին և խտատմաներն կրողին»:

Վարուժանի կերպարան մաճվանից հետո (1915 թ. սպրիլ) նրա աշակերանների և բարեկամների կողմից 1921 թվին հրատարակվեց «Հացին կեղև» հատուրը: «Հացին կեղև» հայկական «Մշակական»-ն է և Վարուժանի սոցալայի մեկ ուրիշ վկայությունը, այս անգամ գլուղական միջավայրից: Գա հայ գլուղի փայտուն ներքոն է, որտեղ նա կրգում է գլուղական աշխատանքը և այդ աշխատանքի արդար վաստակը՝ հացը, հացով ստեղծված առատությունը, խաղաղությունը, բերկությունը: Վարուժանը գլուղական վաս կույրիտով կրգում է աշխատանքի մարզուն՝ գլուղացուն, մշակին: Գիրքը գլուղի գեղանկարական պատկերն է: Ահա մեր աչքերի առաջ է հայ գլուղը իր հունձով, արա ու անդատանով, «ցորյանի ծովերով», իր մշակներով և հմայիչ անզորությունը: Վարուժանը հայրենասերի սրտով և սիրով կրգում է հայրենի բնության գեղեցկությունները: Բնության բարբերները, հայ գլուղացու, մշակի ծրաշան աշխատանքին միացած, կվերացնեն կարիրն ու աղքատությունը: Գլուղի մշակները սրբան առողջ, բաշ ու կորովի են, նույնքան բնավորությամբ բարի են, սրտարաց, անշար և բուղիզ հողիներով», որոնք խինդ են ցանում հայ գլուղերում:

«Յանն», ցանն», նույնիակ հետո սահմանեն, Աստղերու պես, ալքրներու պես ցանն»: Միտերն ի՛նչ փուլթ թե հատիկներդ կավարեն.— Տեղը Աստված պիտի մարգրիտ սերմանեն: Եվ հողը առատորեն վարձատրում է մշակի աշխատանքը:

Հունձի ժամանակ ցորենի ծովերով հորդում են գաշուն ու արտերը և ցորեններով լցվում են ամբարները: Թողը մարդկանց համար հանգիստ ու կրքանիկ կյանք է ցանկանում: Բանաստեղծը նա «Անդատան» բանաստեղծության մեջ համայն աշխարհի համար «խաղաղություն», «բերբրություն», «առատություն», «պաղաքերում» է ցանկանում:

Մեծ է և արժեքավոր Վարուժանի գրական ժառանգությունը: Նրա ստեղծագործությունը իր արժանի տեղն է գրավում հայ ժողովրդի գրականության ոսկյա ֆոնդի մեջ:

Գ. ՀԱՏԻՏՅԱՆ

